Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի

(գանգատ թիվ 31237/03)

Երրորդ բաժանմունքի 2008 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռ

Կոնվենցիայի 3-րդ հոդված

Անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք

Դիմումատուի կալանքի ընդհանուր պայմանների ազդեցության արդյունքում առաջացած տառապանքը և վիրավորանքի ու նվաստացման զգացումները գերազանցել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածով թույլատրելի խստության սահմանը: *Արձանագրվել է խախտում:*

Կոնվենցիայի 6-րդ հոդված

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի զուգակցմամբ

Պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար միջոցների և ժամանակի տրամադրում

Իր պաշտպանությունը նախապատրաստելու համար դիմումատուին տրվել է ընդամենը մի քանի ժամ՝ առանց արտաքին աշխարհի հետ շփման հնարավորության: *Արձանագրվել է խախտում:*

Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդված

Քրեական գործերով գանգատարկման իրավունք

Վարչական տույժի որոշման կիրառման հստակ և մատչելի բողոքարկման իրավունքի բացակայություն: *Արձանագրվել է խախտում:*

Փաստերը

Դիմումատուն եղել է ընդդիմադիր կուսակցության անդամ: 2003 թվականի մարտի 21-ին դիմումատուն մասնակցել է Երևանում ընդդիմության կազմակերպած երթին: Մարտի 22-ին դիմումատուի տուն են եկել ոստիկանության երկու աշխատակիցներ, ովքեր նրան առաջարկել են իրենց հետ գնալ ոստիկանության մոտակա բաժին:

Դիմումատուն դիմադրություն է ցույց տվել, սակայն ոստիկանները նրան տարել են բաժին: Ոստիկանության կազմած վարչական իրավախախտման արձանագրության համաձայն՝ դիմումատուն «չարամտորեն չի ենթարկվել ոստիկանության աշխատողների օրինական պահանջներին և զազրախոսել է»: Ձերբակալությունից մոտ երկու ժամ հետո դիմումատուին տարել են դատարան: Կարճատև նիստից հետո դիմումատուն ենթարկվել է տաս օր ժամկետով վարչական կալանքի: Այնուհետև նա տեղափոխվել է ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայր: Այստեղ դիմումատուին տեղավորել են 7 այլ անձանց հետ 8,75 քմ մակերես ունեցող խցում: Խցում չկային մահճակալներ, այն գերբնակեցված էր, լի մակաբույծներով և միջատներով, բնական լույսի ներթափանցումը, ինչպես նաև զուգարանից օգտվելու հնարավորությունը սահմանափակված էին: Թեև մարտի 25-ին դիմումատուն երեք այլ կալանավորների հետ տեղափոխվել է մեկ այլ խուց, դրա պայմանները շատ չէին տարբերվում առաջին խցի պայմաններից:

Իրավունքը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդված

Պետության պարտավորությունն է ապահովել, որ անձը պահվի այնպիսի պայմաններում, որոնք չեն նվաստացնում վերջինիս մարդկային արժանապատվությունը, որ տվյալ միջոցի իրականացման եղանակն ու մեթոդը նրան չեն պատճառում ավելի մեծ տառապանք և դժվարություն, քան կալանքի հետ կապված տառապանքի անխուսափելի սահմանը և, որ, հաշվի առնելով ազատազրկման գործնական անհրաժեշտությունը, նրա առողջությունն ու բարեկեցությունը բավականաչափ ապահովված են: Հաշվի առնելով դիմումատուի կալանքի պայմանների ընդհանուր ազդեցությունը՝ Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ դիմումատուի կրած դժվարությունները գերազանցել են այն անխուսափելի սահմանը, որը գործում է կալանքի դեպքում և որ դրա արդյունքում առաջացած տառապանքն ու վիրավորանքի ու նվաստացման զգացումները գերազանցել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածով թույլատրելի խստության սահմանը:

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (բ) ենթակետի զուգակցմամբ

Դիմումատուի վարչական գործը քննվել է խնդրո առարկա ժամանակահատվածում առկա արագացված ընթացակարգով: Նրան տարել և պահել են ոստիկանության բաժնում՝ առանց արտաքին աշխարհի հետ շփման որևէ հնարավորության: Նրան ներկայացվել է մեղադրանք և ժամերի ընթացքում նա տարվել է դատարան ու ճանաչվել մեղավոր: Դատարանը գտել է, որ իրականացված դատաքննությունը վկայում է այն մասին, որ դիմումատուն ներկայացված մեղադրանքին պատշաճ կերպով ծանոթանալու, ապացույցները գնահատելու կամ իր արդյունավետ իրավական պաշտպանության համար ռազմավարություն մշակելու հնարավորություն չի ունեցել: Ուստի, Դատարանը եզրակացրել է, որ խախտվել է դիմումատուի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես, իր պաշտպանությունը նախապատրաստելու նպատակով բավարար ժամանակ և միջոցներ չունենալու մասով:

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):

Կոնվենցիայի թիվ 7 արձանագրության 2-րդ հոդված

Ներպետական օրենսդրությամբ սահմանված վերանայման համակարգը չի նախատեսել հստակ ու մատչելի բողոքարկման իրավունք և ընթացակարգ կամ ժամկետներ, ինչպես նաև գործնականում դրա կիրառման համապատասխան փորձ:

Եզրակացություն: Արձանագրվել է խախտում (միաձայն):